Կարգապահական գործ թիվ ԿԳ-25081

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆԱՀԻՏ ԳԱԳԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահագն Քեշիշյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Արթուր Քոչարյանի,

քննության առնելով փաստաբան **Անահիտ Գագիկի Մկրտչյանի (այսուհետ՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 2513), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արթուր Քոչարյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ Պալատ**), հայտնել է, որ փաստաբան Անահիտ Մկրտչյանի հետ կնքել է հանձնարարության պայմանագիր, որը հետագայում փոփոխվել է՝ ծառայության ծավալով պայմանավորված փաստաբանի վարձատրության չափն ավելացել է: Ինքն ամբողջությամբ կատարել է պայմանագրով ստանձնած իր ֆինանսական պարտավորությունները, սակայն փաստաբան Անահիտ Մկրտչյանը չի կատարել իր պարտականությունները, որի արդյունքում ստիպված է եղել միայնակ այցելել Ոստիկանություն, Քննչական կոմիտե և Դատախազություն:

Թիվ ԿԳ-25081-2-Ա
19.11.2025թ.

Դիմողի պնդմամբ, փաստաբան Անահիտ Մկրտչյանը մեկնել է արտերկիր մշտական բնակության կամ վերապատրաստման նպատակով և չի պատասխանում իր հեռախոսազանգերին:

Դիմողը խնդրել է քննարկել Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Դիմումներին կից ներկայացրել է պայմանագրերի, վճարման անդորրագրերի և նամակագրության լուսապատճենները:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.09.2025թ. Դիմողի առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

17.09.2025թ. գրությամբ՝ դիմողը հայտնել է, որ արդեն իսկ ներկայացրել է համապատասխան ապացույցներ:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Անահիտ Մկրտչյանին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Արթուր Քոչարյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը հայտնել է, որ բարեխղճորեն իրականացրել է Արթուր Քոչարյանի ներկայացուցչությունը քրեական վարույթի շրջանակներում: Արթուր Քոչարյանի կողմից նշված այն հանգամանքը, որ ստիպված է եղել առանց Փաստաբանի ներկայանալ իրավապահ մարմիններին, ըստ Փաստաբանի՝ իրականությանը չի համապատասխանում, իսկ վկայակոչված այցերը եղել են Արթուր Քոչարյանի նախաձեռնությամբ և չեն բխել վարույթի անհրաժեշտությունից: Այժմ Փաստաբանը վեցամսյա ժամկետով գտնվում է Գերմանիայի Դաշնությունում կոնֆերանսների մասնակցելու նպատակով, ինչի մասին հեռախոսազանգով տեղեկացրել է Արթուր Քոչարյանին:

Փաստաբանն իր բացատրությամբ չի անդրադարձել Արթուր Քոչարյանի հեռախոսազանգերին չպատասխանելու հանգամանքին:

Փաստաբանը խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

Կից ներկայացրել է վարույթի շրջանակներում կազմված և ներկայացված միջնորդությունների, բողոքների, գրությունների պատճենները, ապացուցողական գործողությունների չստորագրված արձանագրությունների, ինչպես նաև Արթուր Քոչարյանի հետ կնքված պայմանագրի ու նրա կողմից տրված լիազորագրի պատճենները:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.09.2025թ. Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ

մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանը որևէ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

3. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 21.08.2025թ. թիվ 258-Ա/ԿԳ-25081 որոշմամբ փաստաբան Անահիտ Մկրտչյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 3.6.1 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

28.08.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ Աշխատակից**):

3.1. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 28.10.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-3-րդ կետերով սահմանված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 28.10.2025թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 19.11.2025թ. ժամը 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը թիվ 14113223 քրեական վարույթի շրջանակներում: *Սույն փաստը հաստատվում է 19.01.2023թ. հանձնարարության պայմանագրով, ինչպես նաև կողմերի բացատրությամբ:*

2. Փաստաբանը չի պատասխանել Դիմողի որոշ հաղորդագրություններին: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի նամակագրության լուսապատճեններով:*

3. Նամակագրություններից չի հետևում, որ Դիմողը Փաստաբանից հայցել է

տեղեկատվություն հանձնարարության կատարման ընթացքի վերաբերյալ: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի նամակագրության լուսապատճեններով:*

4. Դիմողը նամակներն ուղարկել է Փաստաբանի «Facebook Messenger» հավելվածի միջոցով: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի 11.08.2025թ. դիմում-բողոքին կից ներկայացված Դիմողի և Փաստաբանի նամակագրության լուսապատճեններով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Անահիտ Մկրտչյանը փաստաբան է հանդիսանում 08.12.2018թ. և 2020-2025թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Անահիտ Մկրտչյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.6.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի Կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ:* ***Փաստաբանի***

կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Ըստ այդմ, անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտմանը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի համաձայն՝

Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Վկայակոչված կանոնների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Այդ կապակցությամբ, փաստաբանի համար վստահորդի իրավունքները և օրինական շահերը բարեխիղճ և ժամանակին պաշտպանելուց բացի, սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք նա պետք է իրականացնի հանձնարարության կատարման ընթացքում՝ մասնավորապես, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Փաստաբան Անահիտ Մկրտչյանը, հանդիսանալով Դիմողի ներկայացուցիչը, ներկայացրել է վերջինիս իրավունքներն ու շահերը թիվ 14113223 քրեական վարույթով, ինչի կապակցությամբ Փաստաբանին տրված հանձնարարության վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու նպատակով Դիմողը և Փաստաբանը գտնվել են որոշակի հաղորդակցության մեջ:

Դիմողի 11.08.2025թ. դիմում-բողոքին կից ներկայացրել են «Facebook Messenger» հավելվածից արտատպված կողմերի նամակագրության արտատպված լուսապատճենները, որոնց ուսումնասիրությունները չեն վկայում Փաստաբանի կողմից Դիմողին կանոնավորապես հանձնարարության վերաբերյալ տեղեկություններ չտրամադրելու մասին:

Նախ և առաջ պետք է, փաստել որ Դիմողի կողմից ընտրողական ներկայացվել են նամակագրություններից որոշ հատվածներ, որոնք կտրված են ընդհանուր երկխոսությունից: Ընդ որում, գրագրությունից պարզ է դառնում, որ Դիմողի կողմից ոչ մի անգամ չի բարձրացվել քրեական գործին վերաբերող որևէ հարց, այլ պարզապես քննարկվել է Դիմողի Պալատ դիմելու և կարգապահական վարույթ հարուցելուն ուղղված գործողությունները:

Կողմերի հաղորդակցման ամբողջական պատկերը ստանալու նպատակով Աշխատակցի 09.09.2025թ. կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելու պահանջով Դիմողին առաջարկվել է ներկայացնել՝ հանձնարարության կատարման ընթացքի մասին:

Աշխատակցի 09.09.2025թ. պահանջը ուղարկվել է Դիմողին փոստային առաքման եղանակով, իր կողմից սկզբնական դիմումով տրամադրած հասցեով, ինչը հաստատվում է 11.09.2025թ. փոստային ստացականով:

Դիմողի կողմից իր վկայակոչած պնդումների հաստատման համար վերջինս որևէ ապացույց չի ներկայացրել:

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ ենթադրյալ խախտում թույլ տված փաստաբանի նկատմամբ գործում է անմեղության կանխավարկածի սկզբունքը և քանի դեռ Դիմողը չի ապացուցել Փաստաբանի վարքագծում էթիկական նորմերի խախտման հանգամանքը, վերջինս համարվում է անմեղ:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ Դիմողի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել Փաստաբանին վերագրվող արարքների կատարման հաստատման վերաբերյալ, ուստի՝ չփարատված կասկածները մեկնաբանվում են Փաստաբանի օգտին:

Միաժամանակ, անդրադառնալով Դիմողի պնդմանն առ այն, որ նա «Facebook Messenger» հավելվածի միջոցով պարբերաբար գրել է Փաստաբանին պատկանող էջին, սակայն վերջինիս չի արձագանքել, Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ Փաստաբանի սոցիալական էջը չի կարող դիտվել որպես վստահորդի հետ հիմնական կամ մշտական կապի կամ հաղորդակցման միջոց, առավել ևս, երբ Պալատի պաշտոնական ինտերնետային կայքում, որպես փաստաբանի հետ կապի միջոց նշված են բացառապես վերջինիս էլեկտրոնային փոստի և/կամ բջջային հեռախոսահամարի վերաբերյալ տվյալները, ավելին՝ կողմերի կնքած պայմանագրում ևս այդպիսի հաղորդակցության միջոց կողմերը չեն նախատեսել:

Կարգապահական նիստի ընթացքում, Դիմողը հայտնել է, որ պայմանագիրը կնքելուց հետո նրան հասանելի է եղել Փաստաբանի հեռախոսահամարը և որոշ նամակագրություններ իրականացվել են նաև «Viber» հավելվածի միջոցով: Ընդ որում, Հանձնաժողովը հնարավորություն է ընձեռել Դիմողին ներկայացնել ապացույցները հենց նիստի ընթացքում: Հանձնաժողովն արձանագրում է, որ կարգապահական վարույթի շրջանակներում այլ ապացույցներ և նամակագրություններ Դիմողի կողմից չի ներկայացվել, իսկ կարգապահական նիստի ընթացքում Հանձնաժողովին ճշգրտող հարցերին Դիմողը պատասխանում էր իրարամերժ տեղեկություններ հայտնելու միջոցով:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և դրանց կից ներկայացված փաստաթղթերն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ **սույն կարգապահական գործի շրջանակներում բացակայում են փաստաբան Անահիտ Մկրտչյանին**

կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, քանզի վերջինիս վարքագծում կարգապահական խախտում համարվող հատկանիշներ առկա չեն:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Անահիտ Գագիկի Մկրտչյանի (արտոնագիր՝ թիվ 2513) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.6.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-25081 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25081-2-Ա
19 նոյեմբերի 2025թ.
ք.Երևան